Արձանագրություն N3

Ապարանի համայնքապետարանի կարիքների համար «ԱՄԱՀ-ԱՓՆԱԳՅՈՒՂ-ԳՀԱՇՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի գնահատման նիստի մասին

Ք.Ապարան

«20» Դեկտեմբերի 2018թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Գնահատող Հանձնաժողովի նախագահ՝	Մկրտչյան Հրայր – Համայնքի ղեկավարի տեղակալ(ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝	Գալստյան Ռոբերտ – վարչական տարածքների համակարգման և գյուղատնտեսության բաժնի պետ(ԳԱ) Սիմոնյան Գագիկ – վարչական տարածքների համակարգման և գյուղատնտեսության բաժնի առաջատար մասնագետ(ԲԱ) Սարգսյան Լևոն - Քաղաքաշինության, հողաշինության և ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ (ԲԱ) Գեղամյան Խաչիկ – Ավագանու անդամ(ԳԱ)
Հանձնաժողովի քարտողար՝	Միհեր Ամիրյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է դրական եզրակացություն: Հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ մասը, գնահատող հանձանաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ԱՄԱՀ-ԱՓՆԱԳՅՈՒՂ-ԳՀԱՇՁԲ-18/01 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

1. 3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԱՄԱՀ-ԱՓՆԱԳՅՈՒՂ-ԳՀԱՇՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել՝ «ԱՐՏՇԻՆ 1» ՍՊԸ –ին:

3.2 Համաձայն ՞Գնումների մասին՞ ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի սահմանել անգործության ժամկետ 5 օրացույցային օր:

3.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և անգործության ժամկետի ավարտից հետո չորս աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցներին տրամադրել պայմանագրի նախագիծը:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հաղթող մասնակցի հետ պայմանագիր կնքելու հաջորդ աշխատանքային օրը՝ ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	_____	Մկրտչյան Հրայր
հանձնաժողովի անդամներ՝	_____	Գալստյան Ռոբերտ
	_____	Սիմոնյան Գագիկ
	_____	Սարգսյան Լևոն
	_____	Գեղամյան Խաչիկ
Հանձնաժողովի քարտուղար՝	_____	Ամիրյան Միհեր